

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՈՍԻ
ՍԱՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի
ավագ գիտաշխատող
E-mail: ruzsar@mail.ru*

ORCID iD: 0009-0007-9730-6362
DOI:10.58580/18290019-2025.1.68-4

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 10.12.2025 թ.,
ընդունվել է տպագրության՝ 12.12.2025 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 8.12.2025 թ.
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան

ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԷԶԵՐ ՆՐԱ 1939-1940 ԹԹ. ՆԱՄԱԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Անիտիում

Ղազարոս Սարյանի հարուստ նամակագրությունը հիմք է տալիս ավելի մանրամասն ուսումնասիրելու նրա կենսագրությունը և ստեղծագործությունը՝ մանավանդ նրա որպես անհատի և կոմպոզիտորի կայացման տարիներին: Մեր ուսումնասիրության կենտրոնում են նրա 1939-1945 թթ., Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանում սովորելու, բանակում ծառայելու, պատերազմական վերջին երկու տարիների նամակները: Հորը՝ ականավոր նկարիչ Մարտիրոս Սարյանին, մորը՝ գրող, մանկավարժ և լուսավորիչ, Ղազարոս Աղայանի դստերը, Լուսիկ Սարյանին, հորաքրոջը՝ Կատարինե Սամարյանին, հորեղբորը՝ Հովհաննես Սարյանին ուղղված նամակներից հայտնի են դառնում բազմաթիվ հետաքրքիր և կարևոր փաստեր Ղազարոսի բնավորության գծերի և կամայական խառնվածքի կայացման, նրա երաժշտական հետաքրքրությունների և ստեղծագործությունների մասին: Նամակները գրված են հայերեն և ռուսերեն լեզվի լավ իմացությամբ, անկեղծ և անկաշկանդ շարադրանքով: Դրանք նաև, հուզական զգացմունքային և կարոտով լի են, երբ խոսքը Հայաստանի, հայրական տան, սիրելի և հարազատ մարդկանց մասին է: Ուսումնասիրվող 6 տարիների նամակները մեզ բացահայտում են ուժեղ, նպատակասլաց, սկզբունքային և առնական խառնվածքի տեր երիտասարդին, որին ավելի ուշ տարիներին՝ որպես Լազար Մարտիրոսի կայացած տղամարդուն, կոմպեզիտորին, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ռեկտորին և հասարակական գործչին կձանաչեն, կսիրեն և կհարգեն նրա բազմաթիվ գործընկերներն ու ուսանողները:

Բանալի բառեր: Ղազարոս Սարյան, նամակ, ուսումնարան, կվարտետ, վարիացիաներ, բանակ, անսամբլ, նվագախումբ, պատերազմ, կոնսերվատորիա:

Abstract

PhD in Philology, Senior Researcher, Institute of Arts NAS RA Ruzan Lazar Saryan. - "Unknown pages of Lazar Sarian's Life and Creative work Based on his Letters from 1939-1940".

The rich epistolary heritage of Lazar Sarian provides a basis for a more detailed study of his biography and creative work, especially during the years of his formation as an individual and as a composer. The focus of our research is on his letters from 1939 to 1945, written during his studies at the Gnesin Music College in Moscow, his military service, and the last two years of the war. From the letters addressed to his father, the outstanding painter Martiros Sarian; his mother, a writer, educator, and enlightener, the daughter of Ghazaros Aghayan, Lusik Sarian; his aunt, Katarine Samartsian; and his uncle, Hovhannes Sarian, many interesting and important facts emerge about the formation of Lazar's character and strong-willed temperament, as well as about his musical interests and compositions. The letters are written with a good command of the Armenian and Russian languages and are marked by sincerity and an unrestrained style. They are also filled with deep emotional feelings and longing when speaking of Armenia, the paternal home, and beloved and close people. The letters of these six years reveal a strong, purposeful, principled, and masculine young man, who in later years — already as the mature Lazar Martirosovich, a composer, rector of the Yerevan Komitas State Conservatory, and a public figure — would be known, loved, and respected by his many colleagues and students.

Key Words: Lazar Sarian, letter, music school, quartet, variations, army, ensemble, orchestra, war, conservatory.

Աբստրակտ

Кандидат филологических наук, старший научный сотрудник Института Искусств НАН Армении Рузан Лазаревна Сарьян. - "Неизвестные страницы жизни и творчества Лазаря Сарьяна на основе его писем 1939-1940 гг. ".

Богатое эпистолярное наследие Лазаря Сарьяна дает основание для более детального изучения его биографии и творчества, особенно в годы его становления как личности и композитора. В центре нашего исследования — его письма 1939-1945 гг., написанные в период обучения в Музыкальном училище имени Гнесиных в Москве, службы в армии и последних двух лет войны. Из писем, адресованных отцу — выдающемуся художнику Мартиросу Сарьяну, матери — писателю, педагогу и просветителю, дочери Газароса Агаяна Люсик Сарьян, тете — Катарине Самарцян и дяде — Ованесу Сарьяну, становятся известны многочисленные интересные и важные факты о формировании характера и волевых качеств Лазаря, его музыкальных интересах и произведениях. Письма написаны с хорошим знанием армянского и русского языков, искренним и непринужденным стилем. Они также наполнены глубокими эмоциональными переживаниями и тоской, когда речь идет об Армении, отчем доме, любимых и близких людях. Письма этих шести лет раскрывают перед нами образ сильного, целеустремленного, принципиального и мужественного молодого человека, которого в последующие годы — уже как зрелого мужчину Лазаря Мартиросовича, композитора, ректора Ереванской консерватории имени Комитаса и общественного деятеля — будут знать, любить и уважать многочисленные коллеги и студенты.

Ключевые слова: Лазарь Сарьян, письмо, училище, квартет, вариации, армия, ансамбль, оркестр, война, консерватория.

Նախաբան

Ղազարոս Սարյանի 1939-1945 թվականների նամակները հնարավորություն են ընձեռում բացահայտել նրա ուսումնառության, բանական ծառայելու, պատերազմական և ետպատերազմական շրջանին վերաբերող մի շարք անհայտ փաստեր, որոնք էական ազդեցություն են թողել նրա հետագա ստեղծագործական ճակատագրի վրա: Նամակները օգնում են նաև ճշգրտել նրա կենսագրության կարևոր իրադարձությունների տարեթվերը: Հայտնի փաստ է, որ Ղազարոս Սարյանն Առնո Բաբաջանյանի հետ միասին 1938 թվականին մեկնում են Մոսկվա և ընդունվում Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի կոմպոզիցիայի և դաշնամուրի բաժին, սովորում Վ. Յ. Շերախինի դասարանում:

Երաժշտագետ Սարինա Բերկոյի հեղինակած «Лазарь Сарьян» գրքում, որն ի դեպ լույս է տեսել 1994 թ.՝ Ղազարոս Սարյանի կենդանության օրոք, նա գրում է. «В 1939 году, сразу после окончания училища, его призвали в армию» (1. էջ 15): Սակայն, դա իրականությանը չի համապատասխանում. Ղազարոսը բանակ է գորակոչվել 1940 թվականի հունվարի վերջին՝ անմիջապես ուսումնարանից: Այս փաստն ակնհայտ է դառնում ոչ միայն Ղազարոսի կողմից հարազատներին գրված նամակներից, այլև տիկին Լուսիկ Սարյանի Ե. Վորոշիլովին 1940 թ. փետրվարի 4-ին հասցեագրված դիմումից, որտեղ գրված է. «Вчера неожиданно призвали моего сына, который только перенес воспаление легких. Ввиду плохого состояния здоровья сына, прошу Вашего распоряжения об отсрочке <...> С этим вопросом я обратилась в Военный комиссариат, но мне отказали»* Ստացվում է, որ Ղազարոս Սարյանը Մոսկվայի ուսումնարանում սովորել է ընդամենը մեկ և կես տարի և դեռ չավարտած ուսումնարանը՝ 1940 թ. սկզբին գորակոչվել է Կարմիր բանակ՝ զինվորական ծառայության:

* Դիմումի սևագիրը պահվում է Սարյան ընտանիքի արխիվում:

Ուսումնարանում սովորելու կարճատև, բայց ապագա երաժշտի կայացման համար շատ կարևոր շրջանի մասին, Մ. Բերկոյի գրքում չկա ոչ մի խոսք և դրա բացատրությունը մեկն է՝ նա ծանոթ չի եղել Ղ. Սարյանի արխիվում պահպանվող տվյալ ժամանակաշրջանի կարևոր վավերագրական փաստերի և առաջին հերթին՝ նամակների հետ: Փորձում ենք լրացնել այդ բացը՝ հիմնվելով նամակներում պարունակվող հազվագյուտ փաստերի և հետաքրքիր վկայությունների վրա:

Ավագ եղբորը՝ Սարգիս Սարյանին 1939 թ. հունվարի 29-ի նամակում, Ղազարոսը գրում է. «Գործերս հիմա կարգի ընկան՝ ձեռքերս էլ չեն ցավում, աշխատում եմ կարելի չափով «впитывать» Մոսկվայի կուլտուրան: Ազատ ժամանակս նվիրում եմ ընթերցանությանը, կարդացի «Պատերազմ և խաղաղություն» հիանալի կերպով գրված ստեղծագործությունը: Կինը շատ քիչ եմ գնում, ոչ մի նոր բան չեմ տեսել Մամուրից դեռ, ժամանակս չի ներում»*:

Շատ հետաքրքիր և կարևոր տեղեկություն ենք ստանում Ղազարոսի ստեղծագործական աշխատանքի և ծրագրերի մասին հորը՝ Մարտիրոս Սարյանին հասցեագրված 1939 թ. հունվարի 22-ի նամակից. «Միրելի հայրիկ, ամսի 17-ին նվագեցի մեզ մոտ ստեղծագործական համերգում իմ Վարյա ցիգանները, որոնք վերջացրել եմ այստեղ, շատ հաջող և լավ ընդունվեց աուդիտորիայի կողմից: Այդ հաջողություններով, իհարկե, ես չեմ հանգստանում, հիմա գրում եմ կվարտետի համար շատ լուրջ և պատասխանատու աշխատանքս՝ տեսնենք ոնց տակից դուրս կգամ»:

* Ղազարոս Սարյանի բոլոր նամակները պահվում են Սարյանների ընտանեկան արխիվում, մեծամասամբ անտիպ են: Մեջբերված հատվածները տպագրվում են բնագրի լեզվով:

Փաստորեն դաշնամուրի համար գրված վարիացիաները, որոնք թվագրվում են 1947 թվականով, Ղազարոս Սարյանը գրել է դեռևս ուսումնարանում սովորելիս և առաջին անգամ կատարել 1939 թվականին ուսումնարանում կայացած ստեղծագործական համերգի ժամանակ: Հիմա դժվար է ասել, թե ինչպիսի խմբագրական աշխատանք է կատարել հեղինակը Վարիացիաների վրա Մոսկվայի կոնսերվատորիայում սովորելիս, բայց ամենայն հավանականությամբ դրանք նպաստել են այդ ստեղծագործության ավելի կատարյալ լինելուն:

Ղ. Սարյան նամակները ծնողներին

1939 թ. փետրվարի 28-ին Ղազարոսը շնորհավորում է հորը ծննդյան առթիվ և գրում հետևյալը. «Ես կոմպոզիցիայից Առնոյի հետ 4-րդ կուրսում եմ, իսկ մնացած առարկաներից՝ 3-րդ: Գործերս շատ լավ են: Այս քանի օրը ես վերջացրել եմ Կվարտետի սկերցոն, որը կազմում է ամբողջ Կվարտետի մեկ չորրորդ մասը: Մի քանի օր առաջ «Малый зал»-ում նվագեց Գաբրիելյանը, շատ լավ տպավորություն թողեց բոլորի վրա: Նա խոստացավ նվագել իմ ջութակի էտյուդը: Խոսիք Քուշնարյովի հետ, տես, թե ինչ է ասում: Ես գոհ եմ Շեքսպիրից, բայց ինչքան չլինի նա այնքան էլ լավ չի հասկանում հայկական ժողովրդական երաժշտությունը, որը և ինձ անհանգստացնում է:

<...> Որ գաս այստեղ, հետո բեր հայերեն այբենարան, այստեղ շատերն են ուզում հայերեն սովորել»: Այս նամակից մենք տեղեկանում ենք, որ Ղազարոս Սարյանն իր առաջին լարային Կվարտետի վրա սկսել է աշխատել դեռևս Գնեսինների ուսումնարանում սովորելիս և 1939 թվականին այդ ստեղծագործության մի մասը՝ սկերցոն, կատարել է Ավետ Գաբրիելյանի ղեկավարած հայտնի տետրախորհրդը:

Երբ Ղազարոսին տանում են բանակ, նրա մտահոգություններից մեկն է լինում, որ Կվարտետի պարտիտուրան չկորչի և նա մորը գրում է հետևյալը. «Я мой квартет положил в шифоньерке вместе со всеми нотами. Смотри, чтобы не пропал. Мысленно очень много изменений ввел туда в отношении формы и построения частей, как приеду, наброшусь на него и закончу». (1940, օգոստոսի 26):

Այս ստեղծագործությունը Ղազարոս Սարյանը վերջնական ավարտի կհասցնի միայն 1949 թվականին՝ 10 տարի ընդմիջումից հետո, և դրա պատճառը կլինի նրա մասնակցությունը հայրենական Մեծ պատերազմին: Վերը մեջբերված նամակի, հատվածից հայտնի է դառնում նաև, որ Ղազարոսը գրել է ջութակի համար էտյուդ, որն, ավաղ, չի պահպանվել:

Մինչև այժմ հայտնի է եղել, որ Ղազարոս Սարյանը պատերազմի տարիներին իր համագնդեցիներից ստեղծել և ղեկավարել է ինքնագործունեության անսամբլ: Սակայն 1940 թվականներին գրված նամակներից հայտնի է դառնում, որ դեռևս բանակում ծառայելու ժամանակ Ղազարոս Սարյանն արդեն ունեցել է նման փորձ. նա իր բանակի ընկերներից կազմել է ջազային անսամբլ, որի հետ հանդես է եկել համերգներում: Ահա մի քանի մեջբերում նամակներից. «На днях мы выступали (то есть наш ансамбль, руководитель которого твой сын) на концерте в Доме

К[расной] А[рмии] и имели большой успех. Нам и лично мне вынесли по приказу благодарность. От нарядов освобожден, есть время почитать, позаниматься». (Լուսիկ Սարյաններին, 1940 թ., ապրիլի 4): Երբևիցէ հայտնի չի եղել, որ Ղազարոսը շեփոր է նվագել. «Я нашел товарища, который меня учит играть на трубе (дело не очень трудное)» (Մարտիրոս և Լուսիկ Սարյաններին, 1940 թ., օգոստոսի 26): Ղազարոսի այս նոր երաժշտական գործիքին տիրապետելը նրան հույս է տալիս մնալ իր գործնասուն, որը տեղակայված էր Կիևում. «У меня сейчас новая должность — сигналист. Я научился играть на трубе. Наверное, меня оставят при части. Это на днях выяснится», - գրում է նա եղբորը 1940 թ., դեկտեմբերի 29-ի նամակում: Եվ այդպես էլ եղավ, նա մնաց ծառայելու իր գործնասուն մինչև 1941 թ. ապրիլի 19-ը: Անսամբլը հայտնի է մորն ուղղված Ղազարոսի նամակից, որը գրված է կայարանից՝ Կիևից Լվով մեկնելուց առաջ:

Ղազարոսի, նամակներն ուղղված ծնողներին հիմնականում լավատեսական են, բայց ինչքան էլ որ նա ջանում է դա անել, իրականության դրամատիզմն իրեն զգացնել է տալիս: 1940 թ. սեպտեմբերի 9-ին նա գրում է մորը. «Արդեն մի ամսից ավել է, որ ոչինչ չեմ կարդում: Բոլորովին հետ եմ ընկել կյանքից: «Вряд ли я после армии смогу играть на рояле, я совсем испортил себе руки. Эта мысль мне не дает покоя, а сделать что-нибудь спасательное не возможно».

Այդուհանդերձ, Ղազարոսը շարունակում է մխիթարանք գտնել իր ստեղծած ինքնագործունեության անսամբլի. հետ աշխատանքի, մեջ, մշակում է համերգային ծրագրեր, պարապում է երաժշտների, հետ:

«Вчера наш джаз выступил. Имели большой успех. Особенным успехом пользуется фокстрот “Андрюша”. Мы его повторили несколько раз. Наша солистка пела довольно сносно.

Тебя интересует, какой у нас состав инструментов? И какая программа. Если да, напишу в следующем письме». (Լուսիկ Սարյանի, 1940 թ., նոյեմբերի 6):

Ղազարոսը տեղեկացնում է մորը, որ իր ստեղծած անսամբլն օրեցօր ավելի մեծ ժողովրդականություն և ճանաչում է ստանում:

«Я сейчас нахожусь при части. У нас сегодня будет выступление самодеятельности, которым руковожу я». (1940 թ., դեկտեմբերի 31):

Հաջորդ նամակում (1941 թ., հունվարի 1) նա գրում է. «С большим успехом у нас прошел новогодний концерт. Нам на днях вынесут благодарность перед всем полком. Это самая высокая награда за наши труды. Мне, как руководителю обещали в конце февраля дать отпуск, не знаю на какой срок».

Սակայն ոչ մի արձակուրդը Ղազարոսն այդպես էլ չի ստանում: Ավելին՝ զինվորական ծառայության ժամկետների. երկարաձգման պատճառով բոլոր արձակուրդները չեղարկվում են և Ղազարոսի, զորացրման ժամկետը 1941 թ. աշնանից տեղափոխվում է 1942 թ. աշուն:

Ղազարոս Սարյանը շատ է սիրել կարդալ, նույնիսկ

բանական ծառայելու ժամանակ մշտապես աշխատել է իր վրա, զբաղվել ընթերցանությամբ: Նա խնդրել է եղբորը և մորն իրեն գրքեր ուղարկել, նաև օգտվել է գրադարաններից: Նամակներում հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում Ղազարոսի, ընթերցած գրքերի, և տպավորությունների մասին. Դրանցից մեկը Պոստր Չայկոսկուն նվիրված գիրքն է, որը շարադրել են երկու կին գրողներ (ըստ Ղազարոսի, խոսքերի): Մեզ չհաջողվեց պարզել, թե որ գրքի, մասին է խոսքը և ովքեր, են հեղինակները, սակայն հետաքրքիր է դրա մասին Ղազարոս Սարյանի հայտնած կարծիքը 1940 թ. հունվարի 5-ին եղբորը՝ Սարգիսին, ուղղված նամակում. «Твои книги получил. Большое тебе за них спасибо. Книга о Чайковском написана очень слабо. Если не знать его музыки и читать эту книгу, можно подумать, что это один из обыкновенных композиторов. В книге только как информация проходят даты и главные произведения».

Մեկ այլ նամակում, գրված մորը՝ Լուսիկին, նա գրում է. «Впереди еще бесконечная ночь. Единственное, что меня сейчас развлекает, это переписка Чайковского с фон Мекк», (Լուսիկ Սարյաններին, 1940 թ., հոկտեմբերի 16):

Նամակներում Ղազարոսը հաճախ է հիշատակում Չայկովսկու անունը, պատմում է մորը, որ հնարավորություն է ունեցել մի քանի անգամ ծայրից ծայր լսել. «Пиковая дама» օպերան. «При каждом посещении слушаю ее с большим удовольствием», - գրում է նա: (Լուսիկ Սարյանին, 1941 թ., հունվարի 1):

Իսկ արդեն պատերազմի ժամանակ հարազատներին՝ նամակում 1941 թ., սեպտեմբերի. 17-ին Ղազարոսը գրում է. «Вчера по радио слушал 5-ю симфонию Чайковского — потрясло!».

Նամակներից արված մեջբերումներից կարելի է եզրակացնել, որ Չայկովսկին եղել է Ղազարոսի, սիրված կոմպոզիտորներից մեկը:

Ղազարոս Սարյանի 1940-1941 թթ. գրած մի քանի նամակներից հայտնի է դառնում նրա մեծ հետաքրքրությունը գերմանացի, ականավոր, կոմպոզիտոր. Ռիխարդ Վագների ստեղծագործության հանդեպ: Կարելի է ասել, որ երիտասարդ կոմպոզիտորը լրջորեն տարված է եղել նրա երաժշտությամբ: համենայն դեպս, ոչ մեկ ուրիշ կոմպոզիտորի հասցեին նա երբևէ չի շնայել նման հիացական խոսքեր:

Առաջին անգամ Վագների անունը հայտնվում է Սարգիս Սարյանին ուղղված 1940 թ., հոկտեմբերի. 10-ի նամակում. «Я ужасно интересуюсь вагнеровскими музыкальными драмами. По-моему, в этой области он не имеет себе равных. Мы его изучим с

тобою вместе, но знай, что без немецкого языка ничего не получится. Все переводы не дают и той доли той красоты, которой добился Вагнер в соединении поэзии с музыкой».

Լուսիկ Սարյանին 1940 թ. դեկտեմբերի 31-ին գրված նամակում նա իր տպավորություններով է կիսվում Ռիխարդ Վագներին նվիրված էրուարդ Օյուրեի հեղինակած գրքի, մասին և մասնավորապես գրում է. «Прочел Эдуарда Шюре о Вагнере и его музыкальной драме*, чудная книга. Теперь я знаю содержание всех его опер. Я и давно стремился изучить его, почему-то я к нему очень неравнодушен. Этот гениальный музыкант, поэт и драматург поразили меня своей глубиной и содержательностью. Его гармонии и инструментовку я ценю выше всего, п[отому] ч[то] они являются у него не сухие и академические, а каждый интервал и сочетание инструментов содержат в себе какую-нибудь мысль. И каждый музыкант, прежде чем он берется написать оперу должен быть хотя бы посредственным драматургом в душе, я уж не говорю, таким, каким был Вагнер.

Нельзя ли достать партитуры опер или отрывков из опер Вагнера? Можно даже клави́р — только вряд ли их встретишь».

Ղ. Սարյանի

երաժշտական հետաքրքրությունները

Սա ինքնին շատ կարևոր փաստ է բացահայտելու համար Ղազարոս Սարյանի երաժշտական հետաքրքրությունների շրջանակը, պատկերացում կազմելու համար նրա կոմպոզիտորական ճաշակի ձևավորման փուլերի մասին: հարկ է նշել, որ Ռիխարդ Վագները եղել է խոշորագույն օպերային բարեփոխիչ, հիմնել է իր սեփական օպերային թատրոնը՝ Բայրոյթի թատրոնը (Bayreuth Festspielhaus): Նա նշանակալի ազդեցություն է ունեցել եվրոպական երաժշտական մշակույթի վրա, հատկապես գերմանականի, մասնավորապես՝ օպերային և սիմֆոնիկ ժանրերի զարգացման վրա: Վագներն ուղղակի, կամ անուղղակի, ազդեցություն է ունեցել նաև ռուս հայտնի կոմպոզիտորներ Չայկովսկու, Բորոդինի, Ռիմսկի-Կորսակովի, Սկրյաբինի և Ռախմանինովի. երաժշտամտածողության վրա:

Եղբորը՝ Սարգիսին 1941 թ., հունվարի 15-ին ուղղված նամակում՝ ի պատասխան վերջինիս տեղեկությանը, որ ներկա է եղել Մեծ թատրոնում բեմադրված Վագների «Վալկիրիա» օպերայի ներկայացմանը*, Ղազարոսը գրում է. «Ты пишешь, что смотрел “Валькирию”, как она у нас поставлена? Справились ли хоть приблизительно с этой задачей. Ведь эта постановка чертовски трудная. Как сделаны сцены

* Ակնարկում է՝ Чайковский П.И. Переписка с Н.Ф. фон Мекк в 3 томах /Ред. и примеч. В. А. Жданова, Н.Т. Жегина. Оформл. А. А. Толоконникова. — М.-Л.: Academia (Музыка. Труды Дома-музея П. И. Чайковского), 1934-1936 զրբերը:

* Ակնարկում է՝ Шюре Э. Рихард Вагнер и его музыкальная драма. СПб., М., 1909, զրբերը:

** Չնայած քաղաքական հակասական իրավիճակին՝ 1940 թ. նոյեմբերի 21-ին Մոսկվայի Մեծ թատրոնում հայտնի կինոբեմադրիչ Սերգեյ Էյզենշտեյնի կողմից բեմադրվեց Ռիխարդ Վագների «Վալկիրիա» օպերան:

вихрей? Я представляю, как на тебя действовала музыка, она действительно великолепно. Думаю, я могу ставить остальные “номера”, то есть всю тетралогия или нет?»

Գուցե Ռիխարդ Վագների օպերաների բարձր նշանովի սթափ գնահատականը թույլ չտվեց Ղազարոս Սարյանին այդ ժանրում որևէ ստեղծագործություն գրելու փորձ ձեռնարկել: Ի միջի այլոց, պետք է ասել, որ Մարտիրոս Սարյանի 1950-ական թվականների կեսերին գրված նամակներից հայտնի է դառնում, որ որդին մեծ ցանկությունն է ունեցել գրել «Արա Գեղեցիկ» բալետը: Գուցե նման ծավալի երաժշտական ստեղծագործության մեջ կզգացվեր Վագների ժառանգությամբ Ղազարոսի տարվածությունը, սակայն նույն ժամանակ այդ թեմայով բալետ գրելու հայտ է ներկայացնում Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ռեկտոր, կոմպոզիտոր՝ Գրիգոր Եղիազարյանը, և Ղազարոս Սարյանն ստիպված հրաժարվում է այդ ստեղծագործական գաղափարից: Ղազարոսի Կատարինե հորաքրոջը 1942 թ. մարտի 12-ին գրած նամակում առաջին անգամ հնչում է Գալինա Լեսնիկովայի անունը: Նա Սիբիրից կամավոր ռազմաճակատ մեկնած աղջիկներից էր, որոնցով համալրվեց Լվովից մեծ կորուստներով նահանջած 7-րդ հրանոթազնդացրային գունդը, որտեղ ծառայում էր Ղազարոսը: 1943 թ. նոյեմբերի վերջին, երբ Կինն ազատագրվեց գերմանացի զավթիչներից, Ղազարոսն ու Գալինան ամուսնանում են:

1944 թ. փետրվարին Ղազարոսն իր երգին պարի ազիտրիգայով գալիս է Մոսկվա, մասնակցում ինքնագործունեության մրցույթին և փայլուն հաղթանակ տանում՝ գրավելով առաջին մրցանակը: Ղազարոսը, որպես ղեկավար, արժանանում է Կարմիր աստղ շքանշանի: Նա Մոսկվայում հանդիպում է ծնողների հետ, ներկա գտնվում հոր ծննդյան 64-ամյակին և նորից վերադառնում Կին: Այնտեղից նա գրում է մորը. «Я уже начал работу в агитбригаде. Весь наш коллектив вспоминает вас как самое светлое явление за все время прибывания в Москве» (Լուսիկ Սարյանին, 1944, մարտի 10):

1944-1945 թթ. գրված անտիպ նամակները

Մենք չենք անդրադառնա 1941-1943 թթ. հայրենական պատերազմի տարիներին Ղազարոս Սարյանի դրած նամակներին, որոնք տպագրվել են երաժշտագետ, կոմպոզիտորի երկրորդ կնոջ՝ Արաքսի. Սարյանի կողմից հրատարակված «Письма с фронта» [2] առանձին դրքուկով և «Ղազարոս Սարյանը և նրա ժամանակը» (3.) գրքում, քանզի այդ շրջանի նամակները հայտնի են մեզ անում: Մեր. ուշադրության շրջանակում են 1944-1945 թթ. գրված անտիպ նամակները:

1944 թ. ապրիլի վերջին Մարտիրոս Սարյանը մեկնում է Կին՝ մասնակցելու ուկրաինական նկարիչների պլենումին: Այնտեղ նա 5 տարի ընդմիջումից հետո առաջին անգամ հանդիպում է սիրելի, որդուն, ծանոթանում հարսի՝ Գալինայի հետ: Կատարինե հորաքրոջը 1944 թ. մայիսի. 24-ին հասցեագրված նամակում Ղազարոսը գրում է. «Представляю в какой красе сейчас Ереван. Как хочется приехать туда! Недавно здесь

был папа. Познакомился с Галиной. Понравилась, конечно. Да иначе и не может быть. Скоро наступит счастливый день, когда мы будем сидеть все вместе за столом и вспоминать тяжелый пройденный путь».

1944 թ. ամռանը Մարտիրոս Սարյանը նորից է գնում Կին, այս անգամ տիկնոջ՝ Լուսիկի, հետ, հանդիպելու համար որդու և հարսի հետ: Այնտեղ է Սարյանն ստեղծում Գալինայի և Ղազարոսի, ջրանկար դիմանկարները, որոնց հիման վրա՝ նույն թվականին, ստեղծում է «Բմ երգը» մեծադիր կտավը:

1944 թ. վերջում Գալինան զորացրվում է՝ հղի լինելու պատճառով և Ղազարոսը նրան ուղեկցում է Մոսկվա՝ ծնողների, մոտ: Նրանք միասին դիմավորում են 1945 թվականը, որից հետո Գալինան պետք է մեկնի Երևան: Ղազարոսը գրում է մորը. «Галочка все время перед глазами такая плачущая, какой я ее оставил в Москве...»: (Լուսիկ Սարյանին, 1945 թ., հունվարի 23): Նրանք Ղազարոսի, հետ կհանդիպեն միայն մեկ տարի անց՝ 1945 թվականի, վերջում:

Նույն՝ հունվարի 23-ի նամակում նա մորը գրում է. «Эти два дня очень много играл на аккордеоне. Разучивание «Вальса цветов» идет к концу. Свою «Улицу дорогами» расписал на 2 голоса, завтра буду разучивать с квартетом (квартет у нас - 4 девушки, а поют в 2 голоса, в 4 — слишком сложно)». Նամակում ակնարկվող «Улица дорогами» երդը կորած է:

Մոսկվայից Ղազարոսը վերադառնում է ռազմաճակատ, բայց ոչ մարտական դիրքեր: Նա շարունակում է ղեկավարել ազիտրիգադը, որի առջև օրեցօր նոր խնդիրներ են ծառանում:

Շարագատներին ուղղված 1945 թ. փետրվար ամսվա նամակներում Ղազարոսը տեղեկացնում է, որ իր անսամբլի հետ պատրաստվում է РККА (բանվոր-գյուղացիական Կարմիր բանակ)-ի XVII ամյակին նվիրված փառատոնին, գործիքավորում է ստեղծագործություններ, պարապում մենակատարների հետ: Ապրիլին գրված նամակներից հայտնի է դառնում, որ անսամբլը պատրաստում է մայիսյան մեծ համերգային ծրագիր, որի համար նա պետք է գրի երկու երգ նվագախմբի և երգչախմբի համար: 1945 թ. ապրիլի 7-ին մորն ուղղված նամակում կարդում ենք. «Ансамбль с оркестром уже разучили написанную мною песню, название нельзя писать, потому что она носит название “Песня.”, т.е. нашего соединения. Все хвалят. Звучит хорошо. Но меня, конечно, не удовлетворяет. Хорошо, что я связан непосредственно практически с ансамблем. Эта польза в последствии скажется. Во всяком случае песня написана не чуть не хуже, если не лучше, многих наших так называемых композиторов. Прости, конечно, за нескромность. Написал я ее для 4-хголосного хора. Звучит довольно мощно».

Մենայն հավանականությամբ այս նամակում Ղազարոսն ակնարկում է իր «Мой полк-Седьмой зенитно-пулеметный» (Բմ յոթերորդ հրանոթա-զնդացրային գունդը) երգը, որի երաժշտությունը, ավադ, կորսված է,

Նվիրվում է Ղ. Սարյանի ծննդյան 105-ամյակին

պահպանվել են միայն խոսքերը* :

Նույն այս երգի, առիթով Ղազարոսը 1945 թ. ապրիլին (անթվակիր է) նամակ է գրում հորը, որտեղ շատ կարևոր գնահատական է տալիս պատերազմական շրջանի իր ստեղծագործություններին և կիսվում իր առջև ծառացած այն մասնագիտական խնդիրներով, որոնք պատրաստվում է լուծել ապագայում: Նա գրում է, որ իր վերջին երգը կատարվում է նվագախմբի և երգչախմբի կողմից և լավ տպավորություն է թողնում ունկրնդիրների վրա, սակայն ոճական առումով դա իրեն չի բավարարում: Ահա թե ինչ է գրում նա. «Песня меня далеко еще не удовлетворяет, хотя на подобную тему трудно было бы написать лучше. Но дело в первую очередь в том, что я ни в коем случае не равняюсь на современных композиторов, которые пишут в этом жанре. Это не мой путь, но и в этой отрасли стараюсь придавать песням определенную оригинальность и своеобразие, свойственную именно мне. Этот трюк, между прочим, мне может обойтись дорого. Мне сейчас ничего не стоит за два дня написать большую вещь для хора с оркестром, что своего рода легкомыслие в искусстве, потому что на детали мало обращаю внимания. Но это говорит о том, что в этом жанре я приобрел некоторое мастерство, которое меня несколько не радует. Я со страхом гляжу на пропасть, лежащую между стилем, которым я владел в 1939-1940 году, который именно мне по душе, и теперешним, меня не удовлетворяющим. Это по сути не так страшно, лишь бы не потерять вкуса, что, я думаю, со мною не произойдет».

Այս նամակում արտահայտված մտքերը և նպատակները կարելի է ծրագրային համարել Ղազարոս Սարյանի ստեղծագործողի կայացման ճանապարհին: Հորաքույր Կատարինենին Ղազարոսը տեղեկացնում է, որ համույթի հետ միասին պատրաստում է հաղթանակին նվիրված ծրագիր: Նա գրում է. «Нам предстоит большой рейс, месяца на 2-3, по всем ближним государствам Европы. Это, конечно, очень интересное путешествие, но я его с большим удовольствием променял бы на путешествие в Ереван» (Կատարինե Սամարցյանին, 1945 թ., մայիսի 5): Հաջորդ նամակը նա գրում է մորը. «Сегодня 24 число. На днях Галина должна разрешиться. Как и следует папаше, я, конечно, волнуясь, как все это там пройдет. Мы до сих пор не уехали. Приехал сюда ансамбль 1-го прибалтийского фронта. С нашего и с ихнего ансамблей будет сколочен один сильный ансамбль. Опять начнется целая волынка по реформатированию и подготовке программы. Я думаю, что мне сейчас надо уйти из ансамбля, чтобы к учебному году попасть домой. Но есть одно но, я оттуда могу попасть в училище и тогда консерватории конец».

Այս շրջանի Ղազարոսի ապրումներն ու մտահոգությունները լավագույնս արտահայտված են նրա նամակներում: Զգացվում է նրա հոգեբանական և ֆիզիկական ուժերի չափազանց մեծ լարվածությունը: Նույն 1945 թ., մայիսի 5-ի վերը մեջբերված նամակում նա մորը գրում է. «Черт знает, как сломалась моя жизнь; лучшие годы учебы прошли. Учиться мне до самой старости, что-ли? Или достать себе аккордеон и заняться халтурой? Вот этого-то, наверно, душа не потерпит. Вот в таком сейчас хаотическом состоянии мой мозг».

Եվ միայն զարմանալ կարելի է, թե լինելով այդքան երիտասարդ ինչպիսի ուժեղ, կազմակերպված, նպատակալաց է եղել նա և ինչպիսի կամային հատկություններ է ձեռք բերել պատերազմի հորձանուտում, որ կարողացել է պատվով հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները: Նման կյանքի փորձը Ղազարոս Սարյանի համար կդառնա իսկական դպրոց հետագայում երաժշտական խոշոր գործիչ դառնալու, նաև կոնսերվատորիա դեկավարելու դժվարին աշխատանքում:

1945 թ., հունիսի 5-ին Ղազարոսը նամակ է հղում հորը, չիմանալով անգամ, որ արդեն հունիսի 4-ին ծնվել է նրա առաջնեկ զավակը՝ Կատարինեն: «Работой загружен по уши. Надо учить весь новый, мне не знакомый репертуар. Ничего, работы я уже не боюсь».

Что с Галиной? Неужели в Ереване не принимают телеграммы? В день 3 раза я бегаю на почту. Но, увы! Для меня сейчас период самый тяжелый. Все эти обстоятельства, плюс нервная работа в ансамбле, ложатся на сердце тяжелым грузом. Я уверен, что все кончится благополучно и эта уверенность придает большую бодрость моим силам».

Ետպատերազմական շրջան

Մենք կանդիդատանք արդեն պատերազմի ավարտից հետո՝ 1945 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Ղազարոս Սարյանի դեկավարված երգի և պարի անսամբլի գործունեությանը, ինչի պատճառով հետաձգվեց նրա գործունեությունը բանակից մինչև 1945 թ. հոկտեմբեր ամիսը: Այս շրջանի մասին փաստացի նյութի բացակայության պատճառով երբևէ չի խոսվել: Ինքը՝ Ղազարոս Սարյանը նույնպես լռության է մատնել այն մեզ անհայտ պատճառներով:

Եվ այսպես՝ 1945 թ. Սարյանը գործուղվել է Գերմանիա, որտեղ նա պետք է ընտրեր համերգային դաշնամուրներ (ռոյալներ): Նրան հաջողվում է 27 ընտիր գործիք ուղարկել ճակատային գծում տեղակայված մշակութային ակումբներին: Հունիսի վերջում, առանց հնարավորություն ունենալու հանդիպել հարազատների հետ, տեսնել կնոջը և նորածին դստերը, նա հրաման է ստանում իր անսամբլի հետ նորից մեկնել Գերմանիա: Մեկնելուց առաջ նա մորը գրում է. «Я позавчера приехал с командировки. Побывал в Германии. Увидел многое. Цель моей командировки была выбор хороших роялей и пианино для клубов частей нашего фронта. Привез 27 прекрасных инструментов. Я вам уже писал, что я в ансамбле опять. Вот мы сегодня и

* Տե՛ս [3, էջ 338]:

уезжаем на гастроли в Германию. Там абсолютно спокойно» (*Լուսիկ Սարյանին, 1945 թ., հունիսի. 30*)* :

1945թ. ամռան ամիսներին Ղազարոսն իր անսամբլի. հետ հյուրախաղերի է լինում Եվրոպայում: Նա գրում է *Լուսիկ Սարյանին իր 1945 թ., օգոստոսի. 19-ի նամակում*. «Там мы были 2 месяца, обслуживали наши части в Германии, Польше, Чехословакии. Везде нас принимали очень тепло и радушно. Наши выступления в подразделениях были целым событием в жизни бойцов. Мы, конечно, тоже в свою очередь имели большое моральное удовлетворение в своей работе».

Շատ դժվար կազմակերպչական աշխատանք էր տանում Ղազարոս Սարյանը անսամբլի մասնագիտական մակարդակը բարձր պահելու ուղղությամբ այն պարագայում, երբ արդեն կազմավորված կոլեկտիվից զորացրվում էին երգիչները, երաժիշտները, պարողները: Ղազարոսին թույլ չէին տալիս գոնե մի քանի օրով արձակուրդ վերցնել և նա աշխատում էր ուժերի մեծ լարումով: 1945 թ. օգոստոսի 21-ին հորը գրված նամակում նա հայտնում է, որ 5-6 օրից իր անսամբլի հետ մեկնելու է Վիեննա և Բուդապեշտ. «С одной стороны — это, как будто, очень и приятно. Но, с другой стороны, все это невыносимо надоело. Хочется домой, увидеть всех вас, отдохнуть».

Այս նամակներից պարզ է դառնում, թե ինչքան բարձր էր բանակի ղեկավարությունը գնահատում Ղազարոս Սարյանի գործունեությունը, որպես անսամբլի ղեկավար, որ ոչ մի կերպ չէին համաձայնվում նրան զորացրել: Հասկանալի է, որ առանց նման հմուտ երաժշտի և արհեստավարժ ղեկավարի, համույթը պետք է դադարեր իր գործունեությունը: Այս է պատճառը, որ Ղազարոսը զորացրվեց միայն 1945թ. հոկտեմբերի սկզբին:

Պատերազմի ավարտից հետո ապագա կոմպոզիտորի առաջ էր մարտահրավերներ են ծառանում: Վեց տարի դադարից հետո նա պետք է կարողանար քննություններ հանձնել Մոսկվայի կոնսերվատորիա ընդունվելու և ընդհատված ուսումը շարունակելու համար: Դա նրան հաջողվում է անել և հոկտեմբեր ամսվա կեսերին նա դառնում է Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ուսանող: Հարազատներին նա տեղեկացնում է 1945 թ., հոկտեմբերի 27-ի նամակում. «Наконец-то я закончил все экзамены. Уже посещаю консерваторию. Экзамены сдал я успешно, выше всяких ожиданий».

Մոսկվայի կոնսերվատորիայում ուսանելու տարիներին գրված նամակներում ևս պարունակվում են քիչ հայտնի փաստեր, բայց դա առանձին ուսումնասիրության թեմա է: Կանդիդատանք միայն *Լուսիկ Սարյանին 1950 թ. հունիսին* գրված նամակից մի. հատվածին, որը բավական ինֆորմատիվ է և հետաքրքրական. «Я тебе уже телеграфировал о моей защите диплома. Получил отличную оценку. Как видишь, лицом в грязь не ударил. На диплом представил симфони-ческую

поэму и жанровую сцену “Урожайная”. Председателем комиссии был Кушнарев, ему очень понравились мои вещи. Из 10-и членов комиссии 9 членов поставили отлично, а “этот” Богатырев*, четыре, но его номер конечно не прошел <...>. Я вчера был у Арама, показал свою вещь, ему очень понравилась, он очень тепло отозвался о моем таланте и т.д. Он предложил мне поступить здесь в союз, в субботу я уже буду показываться в союзе. Думаю, что мне удастся продать поэму в радио».

Ղազարոս Սարյանի “Урожайная” ստեղծագործությունը համալրում է նրա չպահպանված գործերի շարքը: Դրանց թվում են նաև պատերազմի ժամանակ գրված բազմաթիվ երգեր, Կարմիր բանակի օրհներգը, իր գնդին նվիրված երգչախմբի և նվագախմբի, համար գրված երգը և այլն: Ամենայն հավանականությամբ, դրանցից մի. մասը ռազմական գործողությունների, շրջանում ինչ-ինչ հանգամանքներում կորսվել է, որոշներն էլ՝ իր արվեստի հանդեպ բավական խստապահանջ և բժախնդիր, կոմպոզիտորը հարկ չի համարել պահպանել:

Վերջաբան

Ղազարոս Սարյանի 1939-1945 թվականների նամակները հնարավորություն են տալիս ծանոթանալու նրա՝ որպես ապագա ստեղծագործողի և երաժշտական գործչի կայացման, կազմակերպչական փորձի ձեռքբերման, ճաշակի և երաժշտական հետաքրքրությունների ձևավորման մի կարևոր շրջանի հետ և հետաքրքրիչ փաստերով էականորեն լրացնել մինչ օրս մեզ հայտնի նրա կենսագրության այս ժամանակահատվածը: Մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չեղավ ավելի մանրամասն անդրադառնալ Մոսկվայի կոնսերվատորիայում ուսանելու տարիներին Ղազարոս Սարյանի գրած նամակներին, որոնք ոչ պակաս հետաքրքիր վավերագրական նյութ են պարունակում: Կաշխատենք այդ բացը լրացնել մոտ ապագայում, երբ տպագրության պատրաստ կլինի նրա նամականու հատորը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Берко М.*, Лазарь Сарьян, Ер.: Луйс 1994, - 96 с.:
2. /Նամակներ ռազմաճակատից, /Կազմող և խմբագիր՝ Արաքսի Սարյան, Եր., «Հայաստանի կոմպոզիտորների միություն» հրատ., 2005, - 72 էջ:
3. /Ղազարոս Սարյանը և նրա ժամանակը. Лазарь Сарьян и его время, /Կազմող և խմբագիր՝ Արաքսի Սարյան, Եր., Կոմիտաս, 2013 թ., - 352 էջ:

Berko M., Lazar Sarian, Yer.: Luis, 1994, - 96 p.
/Letters from the Front, /Compiled and edited by Araxi Sarian, Yer.: Publishing House of the Union of Composers of Armenia, 2005, - 72 p.
/Lazar Sarian and His Time, /Compiled and edited by Araxi Sarian, Yer.: Komitas, 2013, - 352 p.

* Նամակը թվագրվում է ըստ Մոսկվայում դրված փոստային կնիքի, հետևաբար այն գրվել է 7-10 օր առաջ:

* Խոսքը Մոսկվայի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի ամբիոնի ղեկավար Ս. Ս. Բոգատիրյովի (1890-1960) մասին է:

REFERENCES

1. Berko M, Lazar Sarian, Yer.: Luys, 1994, - 96 s.
2. /Namakner razmadchakatitz, /Kazmogh ev khmbagir:
Araqsi Sarian, Yer.: "Hayastani kompozitorneri

miuthyun" hrat., 2005, - 72 eej.

3. /Ghazaros Sarian' ev nra Zhamanak', /Kazmogh ev khmbagir: Araqsi Sarian, Yer.: Komitas, 2013, - 352 s.

Հեղինակի մասին. ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՈՍԻ ՍԱՐՅԱՆ – Ավարտել է Երևանի պետական համալսարանի ռուսագ լեզվի և գրականության բաժինը, բանասիրական գիտությունների թեկնածու: Աշխատել է՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, Մ. Սարյանի տուն-թանգարանի 2004-2023 թթ. տնօրեն, այժմ նույն թանգարանի գույգադրությունների բաժնի պատասխանատու: 2006 թ. ՀՀ Նկարիչների միության անդամ է: 2004-2025 թթ. համադրել և կազմակերպել է Մ. Սարյանի ստեղծագործությունների երեք տասնյակից ավելի գույգահանդեսներ Հայաստանում և արտերկրում: 2000-2025 թթ. Մ. Սարյանի կյանքին և արվեստին նվիրված դասախոսություններով հանդես է եկել Փարիզում (Սորբոնի համալսարանում), (INALCO), Լոնդոնի Հայկական ինստիտուտում, Լոս Անջելեսի Համալսարանում (UCLA), Բոստոնի, Մանսերդամի, Մնսկերպենի, Քյոնի, Մարսելի, Վիեննայի հայ համալսարանում: Հանդիսանում է Ֆրանսիայի Հանրապետության գրականության և արվեստի շքանշանի ասպետ (2009 թ.), պարգևատրվել է ՀՀ ԿԳՄՍ ոսկե մեդալով (2023 թ.): Հրապարակել է մի շարք գրքեր և պատկերագրեր «Մարտիրոս Սարյան. Նամակներ (1908-1928)», 1-ին հատոր, (կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ռ. Սարյան, Եր., Տիգրան Մեզ, 2002, -596 էջ, Сарьян Р., «Сарьян и Россия», книга-альбом, Ер., Тигран Мец, 2006, «Սարյանը և Փարիզը», եաշերի, նամակների և հոդվածների ժողովածու, կազմող և խմբագիր՝ Ռ Սարյան, Եր., «Գասպրինտ» 2007: Գիրքն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ղեկավարման Սarian et Paris, recueil d'entretiens, lettres, souvenirs et articles, compilation et projet par Rouzan Sarian, Erevan, «Gasprint», 2008, - 276p. և 7 գրքեր վերջինից նշենք՝ «Լուսիկը՝ Սարյանի մուսան» պարկերագիրը, կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ռ. Սարյան, Եր., «Անտարես», 2023, 176 էջ: Շուրջ 8 գիտական հոդվածներ:

About the author: RUZAN GHAZAROS (LAZAR) SARYAN - holds a PhD in Philology and serves as a Senior Researcher in the Fine Arts Department at the Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia. From 2004 to 2023, she was the Director of the M. Saryan House-Museum and is currently the Head of the Exhibitions Department at the same institution. A member of the Union of Artists of Armenia since 2006, she has curated and organized over thirty exhibitions of M. Saryan's works both in Armenia and internationally from 2004 to 2025. Additionally, from 2000 to 2025, she has presented lectures on the life and art of M. Saryan at various prestigious institutions, including Sorbonne University and INALCO in Paris, the Armenian Institute in London, and the University of California. She has authored a variety of books and albums, including "Martiros Saryan: Letters (1908-1928)", Vol. 1, where she served as compiler and wrote the preface and notes (R. Saryan, Yerevan, Tigran Mets, 2002, 596pp.); "Saryan and Russia", a book-album (R. Saryan, Yerevan, Tigran Mets, 2006, 140pp.); and "Saryan and Paris", a collection of memoirs, letters, and articles, which she compiled and edited (R. Saryan, Yerevan, Gasprint Edition, 2007; For that publication she was awarded a diploma from the RA Ministry of Culture). She also produced "Sarian et Paris: recueil d'entretiens, lettres, souvenirs et articles, compilation et projet par Rouzan Sarian" (a collection of interviews, letters, memories, and articles, compiled and designed by Rouzan Sarian (Erevan, Gasprint Edition, 2008, 276pp.), along with seven other publications. Her most recent work, "Lusik, Saryan's Muse," released in 2023, includes her compilation, preface, and notes (R. Saryan, Yerevan, Antares Edition, 176 pp.). Ruzan Saryan is the author of about eight scholarly articles.

Об авторе: РУЗАН ГАЗАРОВОБНА САРЬЯН — кандидат филологических наук, старший научный сотрудник Отдела изобразительных искусств Института искусств НАН РА, с 2004 по 2023 гг. директор Дома-музея Мартироса Сарьяна, в настоящее время руководитель экспозиционного отдела того же музея. С 2006 года является членом Союза художников Республики Армения. С 2004 по 2025 год организовала и курировала более трех десятков выставок работ М. Сарьяна в Армении и за рубежом. С 2000 по 2025 год читала лекции о жизни и творчестве М. Сарьяна в Париже (Сорбонна), (INALCO), Армянском институте в Лондоне, Университете Лос-Анджелеса (UCLA), а также в армянских общинах Бостона, Амстердама, Антверпена, Кёльна, Марселя и Вены. Рузан Сарьян является кавалером Ордена Литературы и Искусств Французской Республики (2009), награждена Золотой медалью Академии наук и искусств РА (2023). Опубликовала ряд книг и иллюстрированных изданий: «Мартирос Сарьян. Письма (1908-1928)», 1-й том (составитель, автор предисловия и примечаний Р. Сарьяна, Ер.:Тигран Мец, 2002, - 596 с.); «Сарьян и Россия», книга-альбом, Ер.:Тигран Мец, 2006, - 140 с.; «Сарьян и Париж», сборник воспоминаний, писем и статей, составитель и редактор: Р. Сарьян, Ер.: Гаспринт, 2007. Книга была удостоена диплома Министерства культуры Республики Армения. "Sarian et Paris, recueil d'entretiens, lettres, souvenirs et articles, compilation et projet par Rouzan Sarian ", Erevan, Gasprint, 2008, - 276p. Отметим также иллюстрированное издание «Лусик, муза Сарьяна», составитель, автор предисловия и примечаний Р. Сарьян, Ер.: Антарес, 2023, 176 страниц. Автор около 8 научных статей.